ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 137-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27-Ը ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 27-ը սեպտեմբերի 2024 թվականի թիվ 13 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 27.09.2024թվականի թիվ 13 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Ավետ Մարտինի Հայրապետյանին համասեփականության իրավունքով պատկանող 0.04059 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

4. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին մանկապարտեզի ծնողական վճարներից զեղջելու մասին:

5. Արենի համայնքի 100 տարին բոլորած 2 բնակիչներին տարեցների միջազգային օրվան ընդառաջ գումար հատկացնելու մասին: